

# GRAKAN STY { & AGOR & AKAN

## ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

### ԻՆՉ ԽԱՂԱՂ Է...

Ի՞նչ խաղաղ է այս գիշեր:  
Մանուկներուն անհանդարտ  
Խաղ ու ճիչէն վերջ, կարծես  
Կը սրափէ այս գիշեր:

Գրկել կ'ուզեմ ես ուժգին  
Խաղաղութիւնն այս մութին  
Եւ ծառերուն հետ օրրել  
Լացող սիրտը լուսնակին:

Կը թրթռայ սրտիս մէջ  
Նեռուէն տխուր մեղեդին...  
Յուզուած սրտով լուսնակին  
Կը հասկնամ ցաւն ու տենչ...

29-04-2001

### ԱՇՈՒՆ Է...

Աշուն է, զով իրիկնամուտ,  
Գամուած ես մտքերուս հետ...  
Փողոցներով օձապտոյտ  
Ես կը քալեմ իմ սրտի հետ:

Արեգակն է թոյլ, անվրդով,  
Խիտ մազերով գանգրահեր,  
Ու ոսկեգօծ թարթիչներով  
Կը փայփայէ ձառերն անտէր...:

Ոսկէ սրտեր կը թափթփին  
Փայփայանքէն թարթիչներու...  
Սիրտս ինկաւ ճանապարհին,  
Գնաց գրկին անուրջներու...:

Աշուն է, զով իրիկնամուտ...  
Առ'փիս դեղնած ծովին մէջն եմ...  
Փողոցներով օձապտոյտ  
Կորսուած սիրտս ես կ'որոնեմ:

28-11-2010